

4.5. Ապրանքների արտահանում և ներմուծում

4.5.1 Արտաքին առևտուր

Արտաքին առևտրաշրջանառությունը և աշխարհագրությունը.

Ի կատարումն «Հայաստանի Հանրապետության 2004-2006թթ. պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի հավելվածի 3.3 գլխի է) կետով սահմանված դրույթի և քննարկելով ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտեի հետ բեռնամաքսային հայտարարագրերում գործընկեր երկրների բնորոշման հատկանիշների բացահայտման հնարավորությունները, ինչպես նաև հիմք ընդունելով Միավորված Ազգերի Կազմակերպության կողմից առաջարկվող ապրանքների միջազգային առևտրի վիճակագրության մեթոդաբանությունը¹՝ ՀՀ ԱՎԾ-ն սկսած 2005թ. հունվարի 1-ից ներմուծման ծավալների աշխարհագրական բաշխվածությունն իրականացնում է ըստ ապրանքի ծագման երկրի հատկանիշի: Մինչև 2001թ. ներմուծման աշխարհագրական բաշխվածությունն իրականացվել է ըստ պայմանգիր կնքող երկրի հատկանիշով, իսկ 2001թ-ից՝ առևտուր անող երկրի հատկանիշով: Նշվածով պայմանավորված, ըստ գործընկեր երկրների ներմուծման ծավալների փոփոխության ինդեքսները կհաշվարկվեն ՀՀ մաքսային պետական կոմիտեի կողմից 2004թ. տարեկան տվյալների բազաների ճշգրտման աշխատանքները ավարտելուց հետո:

Համաձայն նույն մեթոդաբանության ապրանքների արտահանման ժամանակ կիրառվում է գործընկեր երկրների բնորոշման վերջնական հայտնի նշանակման երկրի (սպառման երկրի) հատկանիշը, որը և կիրառվում է Հայաստանի Հանրապետությունում սկսած 1993թ-ից:

Ըստ ստացված օպերատիվ տվյալների ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2005թ. հունվար-փետրվարին, ընթացիկ գներով, կազմել է 166962.8 մլն. դրամ կամ 346.6 մլն. ԱՄՆ դոլար, այդ թվում ապրանքների արտահանումը՝ 52308.4 մլն. դրամ (ՖՕԲ գնով) կամ 108.8 մլն. դոլար և ներմուծումը՝ 114654.4 մլն. դրամ (ՄԻՖ գնով) կամ 237.8 մլն. դոլար: Արտաքին առևտրի հաշվեկշիռը բացասական է 62346.0 մլն.դրամով (129.0 մլն. դոլարով), իսկ առանց մարդասիրական օգնությամբ ստացված բեռների՝ 58630.3 մլն. դրամով (121.2 մլն. դոլարով): Ըստ նախնական տվյալների 2005թ. հունվար-փետրվարին արտաքին առևտրի հաշվեկշիռը (արտահանումը և ներմուծումը հաշվարկված ՖՕԲ գներով) կազմել է 98.1 մլն. դոլար:

¹ Համաձայն Միավորված Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ) ապրանքների միջազգային առևտրի վիճակագրության մեթոդաբանության (International Merchandise Trade Statistics, Concepts and Definitions, New York, 2000) անդամ երկրներին առաջարկվում է ներմուծման ժամանակ գործընկեր երկրների բնորոշումն իրականացնել ըստ ա) պայմանգիր կնքող երկրի, բ) առևտուր (ապրանքն առաքող) անող երկրի և գ) ապրանքի ծագման երկրի հատկանիշների, առավելությունը տալով ապրանքի ծագման երկրի հատկանիշին:

ՀՀ արտաքին առևտուրն ըստ առանձին երկրների, 2004-2005թթ. հունվար- փետրվարին

(հազ. ԱՄՆ դոլար)

Երկրի անվանումը	ԱՐՏԱՀԱՆՈՒՄ			ՆԵՐՄՈՒԾՈՒՄ		
	2004 հունվար- փետրվար	2005 հունվար- փետրվար	Աճի տեմպը, %	ըստ առևտուր անող երկրի		ըստ ապրանքի ծագման երկրի
				2004 հունվար- փետրվար	2005 հունվար- փետրվար	2005 հունվար- փետրվար
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	84762.7	108833.1	128.4	173724.0	237807.3	237807.3
որից՝						
ԱՊՅ ԵՐԿՐՆԵՐ	12540.5	18072.7	144.1	39382.1	52785.7	69545.1
այդ թվում՝						
Ռուսաստան	7149.6	11640.3	162.8	28188.9	39217.3	25387.2
Վրաստան	2648.1	4160.0	157.1	4880.6	4389.3	1023.5
Ուկրաինա	1769.2	1885.2	106.6	5337.0	6604.8	16916.1
Թուրքմենստան	215.8	102.4	47.5	0.0	6.6	22118.7
Ղազախստան	111.9	195.5	174.7	0.0	76.7	322.8
Բելառուս	269.0	69.3	25.8	501.1	1902.8	2063.7
ԱՊՀ այլ երկրներ	376.8	20.0	5.3	474.5	588.2	1713.1
Այլ երկրներ	72222.3	90760.4	125.7	134341.9	185021.6	168262.2
այդ թվում՝						
ԵՄ ԵՐԿՐՆԵՐ	40574.3	54883.7	135.3	62734.0	83483.6	64451.5
այդ թվում՝						
Ավստրիա	4.3	261.5	6151.1	588.2	1026.5	887.3
Բելգիա	18107.2	16503.7	91.1	12318.8	27836.6	24986.8
Ֆինլանդիա	65.9	0.0	0.0	317.8	833.6	443.3
Ֆրանսիա	351.0	339.8	96.8	2131.0	4500.1	4616.9
Գերմանիա	7686.7	23053.6	299.9	10482.5	7738.5	10144.0
Հունաստան	163.6	50.0	30.5	4881.0	2357.2	2923.8
Իտալիա	4818.6	2714.5	56.3	4252.1	5934.7	10586.9
Լյուքսեմբուրգ	112.1	115.6	103.1	6526.0	7199.8	4.2
Նիդեռլանդներ	4020.0	11468.1	285.3	1126.4	2515.4	1849.1
Սեժ Բրիտանիա	4218.5	15.6	0.4	13727.9	18059.7	2003.1
Իսպանիա	434.5	0.2	0.0	760.7	508.9	822.8
Կիպրոս	0.0	0.7	2333.3	2680.5	989.7	135.6
Չեխիա	2.7	0.4	15.8	293.5	1085.5	1202.4
Լեհաստան	3.2	0.0	0.0	533.9	551.0	997.5
Սլովակիա	0.0	1.2	0.0	356.9	556.7	528.2
ԵՄ այլ երկրներ	586.1	358.9	61.2	1757.0	1789.6	2319.7
Այլ երկրներ	31648.0	35876.7	113.4	71607.9	101538.0	103810.7
Իսրայել	9141.6	14311.3	156.6	11550.9	21832.3	22294.8
ԱՄՆ	6763.7	5177.5	76.5	11675.6	11893.9	10781.1
Միաց.Արաբ. Էմիրություններ	1884.3	506.3	26.9	9061.9	12520.1	2757.9
Իրան	3798.0	2532.9	66.7	8206.4	9995.7	8532.4
Բուլղարիա	100.0	1.2	1.2	1243.0	1239.2	4847.7
Թուրքիա	177.0	375.4	212.1	3219.2	5384.8	6070.4
Շվեյցարիա	2537.5	8308.9	327.4	9518.7	12302.6	12947.6
Ռումինիա	12.8	201.6	1574.0	24.1	43.1	4648.1
Չինաստան	2239.4	0.3	0.0	1440.4	1961.0	6807.9
Բրազիլիա	0.0	0.0	0.0	50.3	90.8	4546.9
Ճապոնիա	69.9	5.5	7.9	301.5	1062.8	3646.3
Պանամա	57.9	107.9	186.3	8123.4	10851.3	0.0
Հնդկաստան	1.7	68.0	4119.3	890.4	1787.2	2818.1
այլ երկրներ	4864.2	4280.0	88.0	6302.3	10573.3	13111.6

ՀՀ արտաքին առևտրի կառուցվածքը 2004-2005թթ. հունվար- փետրվարին,%

Երկրի անվանումը	Արտահանում		Ներմուծում		
	2004թ. հունվար-փետրվար	2005թ. հունվար-փետրվար	Ըստ առևտուր անող երկրի		Ըստ ապրանքի ծագման երկրի
			2004թ. հունվար-փետրվար	2005թ. հունվար-փետրվար	2005թ. հունվար-փետրվար
Ը Ն Դ Ա Ս Ե Ն Ը	100.0	100.0	100.0	100.0	100.0
որից՝					
ԱՊՅ ԵՐԿՐՆԵՐ	14.8	16.6	22.7	22.2	29.2
այդ թվում՝					
Ռուսաստան	8.4	10.7	16.2	16.5	10.7
Վրաստան	3.1	3.8	2.8	1.8	0.4
Ուկրաինա	2.1	1.7	3.1	2.8	7.1
Թուրքմենստան	0.3	0.1	0.0	0.0	9.3
Ղազախստան	0.1	0.2	0.0	0.0	0.1
Բելառուս	0.3	0.1	0.3	0.8	0.9
ԱՊՅ այլ երկրներ	0.4	0.0	0.3	0.2	0.7
Այլ երկրներ	85.2	83.4	77.3	77.8	70.8
այդ թվում՝					
ԵՄ ԵՐԿՐՆԵՐ	47.9	50.4	36.1	35.1	27.1
այդ թվում՝					
Ավստրիա	0.0	0.2	0.3	0.4	0.4
Բելգիա	21.4	15.2	7.1	11.7	10.5
Ֆինլանդիա	0.1	0.0	0.2	0.4	0.2
Ֆրանսիա	0.4	0.3	1.2	1.9	1.9
Գերմանիա	9.1	21.2	6.0	3.3	4.3
Հունաստան	0.2	0.0	2.8	1.0	1.2
Իտալիա	5.7	2.5	2.4	2.5	4.5
Լյուքսեմբուրգ	0.1	0.1	3.8	3.0	0.0
Նիդեռլանդներ	4.7	10.5	0.6	1.1	0.8
Մեծ Բրիտանիա	5.0	0.0	7.9	7.6	0.8
Իսպանիա	0.5	0.0	0.4	0.2	0.3
Կիպրոս	0.0	0.0	1.5	0.4	0.1
Չեխիա	0.0	0.0	0.2	0.5	0.5
Լեհաստան	0.0	0.0	0.3	0.2	0.4
Սլովակիա	0.0	0.0	0.2	0.2	0.2
ԵՄ այլ երկրներ	0.7	0.3	1.0	0.8	1.0
Այլ երկրներ	37.3	33.0	41.2	42.7	43.7
Իսրայել	10.8	13.1	6.6	9.2	9.4
ԱՄՆ	8.0	4.8	6.7	5.0	4.5
Միաց.Արաբ. Էմիրություններ	2.2	0.5	5.2	5.3	1.2
Իրան	4.5	2.3	4.7	4.2	3.6
Բուլղարիա	0.1	0.0	0.7	0.5	2.0
Թուրքիա	0.2	0.3	1.9	2.3	2.6
Շվեյցարիա	3.0	7.6	5.5	5.2	5.4
Ռումինիա	0.0	0.2	0.0	0.0	2.0
Չինաստան	2.6	0.0	0.8	0.8	2.9
Բրազիլիա	0.0	0.0	0.0	0.0	1.9
Ճապոնիա	0.1	0.0	0.2	0.4	1.5
Պանամա	0.1	0.1	4.7	4.6	0.0
Հնդկաստան	0.0	0.1	0.5	0.8	1.2
այլ երկրներ	5.7	3.9	3.6	4.4	5.5

Արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը¹

2005թ. հունվար-փետրվարին արտահանման ծավալը 2004թ. հունվար-փետրվարի նկատմամբ աճել է 28.4%-ով, իսկ ներմուծումը՝ 36.9%-ով: Հարկ է նշել, որ միայն ադամանդե քարերի ծավալների չեզոքացման պայմաններում արտահանման ծավալի աճը կկազմի 36.2%, իսկ ներմուծմանը՝ 26.9% :

2004 և 2005թթ. հունվար- փետրվարին արտահանման և ներմուծման ծավալների համեմատական աղյուսակ ըստ ապրանքախմբերի

(հազ. դոլար)

	Արտահանում			Ներմուծում		աճի տեմպը (%)
	2004թ. հունվար-փետրվար	2005թ. հունվար-փետրվար	աճի տեմպը (%)	2004թ. հունվար-փետրվար	2005թ. հունվար-փետրվար	
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	84762.7	108833.1	128.4	173724.0	237807.3	136.9
<i>այդ թվում՝</i>						
կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	646.9	737.3	114.0	5565.5	5488.2	98.6
բուսական ծագման արտադրանք	540.0	913.7	169.2	16513.7	13375.8	81.0
կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	1.1	0.0	0.0	2734.2	3926.0	143.6
պատրաստի սննդի արտադրանք	7605.4	9160.6	120.4	10570.7	20149.5	190.6
հանքահումքային արտադրանք	10916.3	6367.4	58.3	34304.8	39796.9	116.0
քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	208.5	329.5	158.1	8991.8	12767.8	142.0
պլաստմասսա և դրանցից իրեր,կաուչուկ և ռետինե իրեր	1798.0	109.9	6.1	2930.1	4633.5	158.1
կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	175.3	211.1	120.4	159.9	209.4	131.0
փայտ և փայտյա իրեր	181.9	75.5	41.5	1310.4	1565.4	119.5
թուղթ և թղթից իրեր	234.1	261.1	111.6	3112.6	3491.0	112.2
մանածագործական իրեր	6616.8	3567.0	53.9	5609.1	6358.0	113.4
կոշիկեղեն, գլխարկներ, հովանոցներ	6.5	16.8	258.2	265.0	688.4	259.8
իրեր քարից, գիպսից,ցեմենտից	101.7	457.5	450.1	3523.6	3509.7	99.6
թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	37225.1	44041.0	118.3	35756.6	63842.0	178.5
ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	9070.4	38068.2	419.7	10402.0	6586.7	63.3
մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	3107.8	2879.2	92.6	17521.4	25099.9	143.3
վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	1007.3	1155.7	114.7	9348.8	18293.9	195.7
սարքեր և ապարատներ	5242.4	363.8	6.9	2913.8	4846.1	166.3
տարբեր արդյունաբերական ապրանքներ	64.8	80.8	124.6	2189.6	3157.0	144.2
արվեստի ստեղծագործություններ	12.6	36.9	293.5	0.4	22.1	5534.8

¹ Ապրանքների դասակարգումն իրականացվել է ըստ ԱՊՀ երկրների, Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ԱՏԳ ԱԱ) բաժինների: